ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի նոյեմբերի 7 - 9-ը
Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա գործուղման արդյունքների մասին

(ՀՀ վարչապետի 28.10.2022թ. N 1273-Ա որոշում)

1. Անուն, ազգանունը՝

1) Արմեն Եգանյան
2) Սամվել Պարանյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

1) ՀՀ էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության քաղաքականության վարչության պետ,
2) ՀՀ էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության քաղաքականության վարչության արդյունաբերության զարգացման բաժնի գլխավոր մասնագետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2022 թվականի նոյեմբերի 7-9-ը:

4. Հրավիրող կողմը՝

АО «Электронный паспорт» (այսուհետ՝ Կազմակերպություն):

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

«Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» Համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) միանալու արդյունքում անհրաժեշտ է մշակել նոր իրավական ակտեր կամ իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված Համաձայնագրի դրույթների կիրառման իրավական դաշտի ստեղծմանը, ինչպես նաև տեխնիկական և կազմակերպչական աշխատանքներ՝ ուղղված ավտոտրանսպորտային միջոցների անձնագրի ազգային համակարգի գործարկմանը և միասնական համակարգին միանալուն (այսուհետ՝ Համակարգ):

6. Քննարկված թեմաները

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և միասնական Համակարգի Ադմինիստրատոր հանդիսացող (Կազմակերպության) հետ համագործակցություն և տեխնիկական աջակցության ստացում Հայաստանում Համաձայնագրի կիրառման համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի ձևավորման և տեխնիկական խնդիրների լուծման հարցում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Նոյեմբերի 7-8-ին՝

- Տեղի են ունեցել հանդիպում-քննարկումներ Կազմակերպության գլխավոր տնօրեն Իլյա Մինկինի հետ, որտեղ հայկական կողմը ներկայացրել է Հայաստանում համակարգի ներդրման համար կատարված աշխատանքների ընթացքը,

- Իրականացվել են հանդիպում-քննարկումներ АО «Электронный паспорт»-ի մասնագետների հետ՝ Հայաստանում Համակարգը գործարկելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցառումների իրականացման և վերջիններիս կողմից աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ:
- Կատարվել է բնագավառին առնչվող Ռուսաստանի Դաշնության օրենսդրական դաշտի ուսումնասիրություն,
- Միասնական Համակարգի ձևավորման և գործարկման փորձի ուսումնասիրություն՝ Հայաստանում տեղական Համակարգի ստեղծման և միասական համակարգին միացման գործընթացներում կիրառելու նպատակով,
- Կազմակերպության կողմից գործարկված պիլոտային ծրագրի ցուցադրական միջոցառումներին մասնակցություն,

Նոյեմբերի 9-ին՝

- Հանդիպում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներքին շուկաների, տեղեկատվայնացման, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների նախարարի և ստորաբաժանումների ղեկավարության հետ՝ օրենսդրական դաշտի ձևավորման հարցում աջակցություն ցուցաբերելու և ընդհանուր գործընթացների շրջանակներում ծրագրային ապահովման տրամադրման ուղղությամբ:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել՝

- շարունակել համագործակցությունը՝ ուղղված Հայաստանում Համակարգի ձևավորման և ներդրմանը,
- Կազմակերպության հետ իրականացնել պիլոտային ծրագիր, որը կարագացնի Հայաստանում Համակարգի ստեղծմանն ուղղված գործընթացները:
- գործընթացների իրականացման հարցում Կազմակերպության մասնագետների կողմից հետագա աջակցության ստացում,

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները և ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է երկամսյա ժամկետում կազմակերպել հանդիպում-քննարկում (Երևանում կամ Մոսկվայում) Կազմակերպության հետ (համաձայնեցվել է գլխ.տնօրենի հետ)՝ կատարված աշխատանքների ընթացքն ամփոփելու և Համակարգը գործարկելու նպատակով:

10. Գործուղվողը, ստորագրություն, ամսաթիվ

Արմեն Եգանյան
11.11.2022թ.